ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅՑՈՐԴ ԱՐԻՆԵ ՏԱՐՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը 00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսությունը մի ամբողջական համակարգ է, որի յուրաքանչյուր բաղադրիչ կատարում է որոշակի գործառույթ: Համակարգի բաղկացուցիչներից որևէ մեկում տեղ գտած խնդիրները արագորեն ազդում են ողջ համակարգի վրա: Ատենախոսության շրջանակներում անդրադարձ է կատարվել ՀՀ աշխատանքի շուկային, իսկ ավելի կոնկրետ զբաղվածության կարգավորման հիմնախնդիրներին: Զբաղվածությունը ինքնին բարդ և բազմակողմանի երևույթ է, որի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Զբաղվածության խթանման հարցում կարևոր է բոլոր գործոնների համադրումը: Սակայն, գործոնների ճիշտ ընտրության և համադրության համար աշխատանքի շուկայում անհրաժեշտ է ողջամիտ տնտեսական քաղաքականության իրականացում:

Հատկապես 2020 թ.-ը շրջադարձային էր ՀՀ աշխատանքի շուկայի համար, հաշվի առնելով Քովիդ-19 համավարակի, իսկ այնուհետև նաև 44-օրյա պատերազմի հետևանքները: Այս առումով, հետևաբար կարելի է պնդել, որ մեծ ճգնաժամ է սպասվում հենց աշխատանքի շուկայում, քանի որ այս շուկայի առանձնահատկություններից մեկը նա է, որ դրա կենտրոնում մարդն է, ով առաջարկում է իր աշխատանքը: Մյուս կողմից մեծ խնդիրներ են առաջ գալու նաև աշխատուժի պահանջարկի տեսանկյունից: Այս բացասական գործընթացները կարող են տևել տարիներ: Իրավիճակին կարճաժամկետ հանգուցալուծումներ տալով կարելի է գնալ առաջ, սակայն ճիշտ քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել զբաղվածության մակարդակը տարբեր կողմերից: Այս տեսանկյունից զբաղվածության մակարդակի հետազոտումը իրականացվել է նախ և

առաջ աշխատանքի շուկայի և դրանում գործող առանցքային ցուցանիշների ուսումնասիրությամբ: Նկատենք, որ զբաղվածության կարգավորման արդիականացումը նպաստում է աշխատանքի շուկայում առկա ավանդական մոտեցումների վերանայմանը և նոր միջավայր է ստեղծում, որը բոլոր ոլորտներում պահանջում է զբաղվածության նոր քաղաքականության մշակում: Վերջինիս ընտրության հարցում մեծ նշանակություն ունի միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը կատարվել է աշխատանքի շուկային վերաբերող տարբեր մոդելների նկարագրության օգնությամբ:

Այնուհանդերձ, զբաղվածության կարգավորման այնպիսի հարցեր, ինչպիսիք են համադրելի վիճակագրական տեղեկատվության գործոնային վերլուծությունը, շահառուների տեսանկյունից կարգավորիչ գործիքակազմի կիրառման արդյունավետության գնահատումները դեռևս իրենց լիարժեք լուծումները չեն ստացել ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական հետազոտողների աշխատություններում, որն էլ կանխորոշել է ինչպես ատենախոսության առջև դրված խնդիրները, այնպես էլ դրանց լուծումների գծով եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է ՀՀ զբաղվածության մակարդակի համալիր վերլուծությունը և դրա վրա կարգավորիչ ազդեցության գործոնների գնահատման մեթոդաբանության մշակումը:

Հետազոտության նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ՀՀ աշխատանքի շուկայի հետազոտության կոնտեքստում ներկայացնել բնակչության զբաղվածության կարգավորման տեսական հիմքերը և գործառույթները,
- Աշխատաշուկայի և զբաղվածության կարգավորման մոդելների կիրառման միջազգային փորձի վերլուծության հիման վրա բացահայտել դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում,

- վերլուծել զբաղվածության մակարդակի և դրա վրա ազդող մի շարք գործոնների փոխկապվածությունը և այս համատեքստում լուծել վիճակագրական տվյալների համադրելիության խնդիրը:
- վերլուծել զբաղվածության և տնտեսության կարևորագույն ցուցանիշների փոխկապվածությունը մակրոմակարդակում և տնտեսության առանցքային ճյուղերում,
- մշակել զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մոտեցումներ,
- շահառուների սպասումների տեսանկյունից առաջարկել զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման մեթոդաբանություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է, մասնավորապես, ՀՀ աշխատանքի շուկան: Հետազոտության առարկան զբաղվածության կարգավորման համակարգն է և դրա վրա ազդեցություն ունեցող գործոնների արդյունավետությունը:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը պայմանավորված են առաջադրված նպատակով և խնդիրներով: Այն շարադրված է 138 էջի վրա՝ առանց հավելվածների, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, պարունակում է 18 աղյուսակ, 33 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին «**Բնակչության զբաղվածության և աշխատանքի շուկայի տեսամեթոդաբանական մեկնաբանումները**» գլխում քննարկվում են

աշխատաշուկայի կարգավորման հիմնախնդիրները և այդ ուղղությամբ միջազգային առաջավոր փորձի լուծումները:

Կարևորվել է աշխատողների սոցիալական և իրավական պաշտպանվածության բարձր մակարդակը, աշխատաշուկայի արդյունավետ ակտիվ քաղաքականությունը: Ասիական մոդելի բնորոշ գծերից է կադրերի վերապատրաստումը, որը համապատասխանում է կազմակերպության պահանջներին, ինչն էլ կանխում է որակյալ անձնակազմի արտահոսքը կազմակերպությունից դուրս, աշխատողների բարոյահոգեբնական մոտիվացումը: Որպես բրիտանական մոդելի կարևոր հատկանիշ, կարելի է առանձնացնել սոցիալական ապահովության բարձր մակարդակը, իսկ ամերիկյան մոդելից կարելի է առանձնացնել աշխատատեղերի ստեղծման արագությունը, մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները և աշխատանքային խիստ պայմանները, որը կնպաստի աշխատողների ավելի պատասխանատու մոտեցմանը իրենց աշխատանքին, անհատի ինքնազարգացման և ինքնադրսևորման հնարավորությունների օգտագործմանը աշխատաշուկայում նամանավանդ թվային տնտեսության պայմաններում:

Ատենախոսի կարծիքով ՀՀ զբաղվածության հետ կապված դժվարությունների հիմնական պատճառներն են ուսումնական հաստատությունների շրջանավարտների որակավորման և կրթության մակարդակի, հատկապես փորձառության անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, բուհերում շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման և զբաղվածության հստակ ռազմավարության բացակայությունը:

Ատենախոսության երկրորդ **«Զբաղվածության պետական կարգավորման հայեցակարգային հիմնախնդիրները»** գլխում իրականացվել են վիճակագրական գործոնային վերլուծություններ:

Զբաղվածության վրա COVID-19-ի ազդեցությունը ուսումնասիրելու նպատակով որպես բազային տվյալներ են համարվել զբաղվածության մակարդակի դինամիկայի եռամսյակային շարքերը: Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության վրա COVID-19-ը և պատերազմը հանրագումարային ազդել են միջինը 7-8%-ով նվազմամբ:

Հայցորդը հետաքրքիր եզրահանգումներ է կատարում, մասնավորապես նշելով, որ <<Աշխատանքի առաջարկի աճը հանգեցնում է նրան, որ մարդիկ աշխատանք

ունենալու և իրենց մինիմալ կարիքները հոգալու կամ էլ նույնիսկ գոյությունը պահելու համար համաձայնում են աշխատել ցածր աշխատավարձով, ոչ նորմալ աշխատանքային պայմաններում, ավել աշխատաժամանակով և աշխատանքային օրեսդրությամբ նախատեսված այլ պայմանների խախտումներով, և, եթե նույնիսկ դա էլ չի հաջողվում, ապա նախ անհատը, հետո արդեն երկիրը կանգնում է արտագաղթի սպառնալիքի առջև: Եվ հենց ներքին շուկայում որակավորված մասնագետների ցածր պահանջարկն է համարվում ուղեղների արտահոսքի հիմնական պատճառը>>: Այնուհետև վերլուծելով ՀՀ մարզերում աշխատավարձի նկատելի տարբերությունները, եզրակացնում է, որ << Շարունակում են մտահոգիչ մնալ նաև միջին աշխատավարձի տարածքային տարբերությունները, որոնք հանգեցնում են մարզերի միջև եկամուտների տարբերության ավելացմանը: Աշխատավարձի շերտավորումն ըստ մարզերի պայմանավորված է սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններով, ենթակառուցվածքների զարգացման աստիճանով, ներդրումների և արտահանման ծավալներով:

Մարզերում որոշ մասնագիտությունների գծով զգացվում է չբավարարված պահանջարկ, ինչը պայմանավորված է ՀՀ աշխատուժի կենտրոնացմամբ Երևանում և հարակից մարզերում: Բացի այդ՝ չկան հստակ մեխանիզմներ, որոնք կխթանեն որակյալ աշխատուժի հոսքը դեպի մարզեր: Սա լրջագույն սոցիալական խնդիր է, և աշխատավարձի պետական քաղաքականության համատեքստում առանցքային տեղ պետք է ունենա տնտեսության առանձին ոլորտներում աշխատավարձերի համամասնության մեղմումը, հակառակ դեպքում ավելի կխորանա հասարակության եկամուտների բևեռացումը>>:

Իրատեսական գնահատական տալով աշխատաշուկայում առկա թերություններին, ատենախոսը նկատում է, որ << ՀՀ աշխատաշուկայում գործատու-աշխատող հարաբերություններն ավելի շատ հիմնված են անձնական հարաբերությունների վրա, հատկապես մասնավոր հատվածում մարդիկ հաճախ աշխատում են օրական 10-12 ժամ: Աշխատաժամանակի գերբեռնվածությունը հատկապես բնորոշ է սպասարկման, առևտրի, տրանսպորտի ոլորտներին: Լայն բնույթ է ստացել նաև տոն-հանգստյան օրերին աշխատել և չվարձատրվելը, հարկադիր արձակուրդները, երկրորդային զբաղվածությունը, ստվերային

աշխատանքը և այլն: Վերջինս իր բացասական ազդեցությունն է ունենում նաև աշխատավարձի չափի օրենսդրական կարգավորման վրա>>:

Ատենախոսի կարծիքով, ճգնաժամի ավարտից հետո Հայաստանի տնտեսությունը մտնելու է զարգացման մի նոր, հետճգնաժամային ժամանակաշրջան, որն անհնար է պատկերացնել առանց կայուն աշխատանքի շուկայի: Վերջինս թույլ կտա մեր երկրին լիակատար ինտեգրվել միջազգային տնտեսական հարաբերություններին, որտեղ որոշիչ նախապայման է երկրի մրցունակությունը, բարձր որակավորված և շարժունակ աշխատուժը, կայուն զբաղվածությունը և նմանատիպ այլ գործոններ:

Ատենախոսության երրորդ **«Զբաղվածության կարգավորման արդյունքների գնահատման բարելավման ուղիները»** գլխում քննարկվել են զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատմանը առնչվող հիմնախնդիրների լուծումներ: Տարբեր չափիչներով զբաղվածության կարգավորման արդյունքների գնահատումները ներկայացվել է չափայնության մեկ հարթությունում և դրանք դարձվել համադրելի: Դիցուք, առաջարկվել է զբաղվածության կարգավորման արդյունքները ներկայացնել գործակիցներով, որոնք ներառվում են կարգավորման արդյունավետությունը բնութագրող մեկ ինտեգրալային ցուցանիշում և ներկայացնում են շահառուների սպասումների իրագործման աստիճանը: Այս նպատակով առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

Առաջին, համապարփակ ներկայացնելու զբաղվածության կարգավորման շահառուների սպասումների իրագործման փաստացի աստիճանը և գնահատելու կարգավորիչ գործիքների կիրառումից ստացվող ձեռքբերումները:

Երկրորդ, իրականացնելու զբաղվածության վարքագծային գործոնային վերլուծություն, պարզելով կարգավորման յուրաքանչյուր ուղղության ազդեցությունը զբաղվածության մակարդակի փոփոխությունների վրա:

Երրորդ, ապահովելու զբաղվածության կարգավորման տարաբնույթ արդյունքների միասնական չափայնություն, որը հնարավորություն է ընձեռնում համադրելի դարձնելու պետություն-մասնավոր ոլորտ փոխահամագործակցված կարգավորիչ գործառույթների արդյունքները և դրանով իսկ վերհանելու զբաղվածության կարգավորման ուժեղ և թույլ կողմերը:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և կատարվել են առաջարկություններ ՀՀ-ում զբաղվածության կարգավորման ուղղությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Զբաղվածության հիմնախնդիրների հետազոտության հիման վրա որպես գիտական նորույթ առաջադրվել են հետևյալ դրույթները՝

- ՀՀ աշխատաշուկայի կառուցվածքային տեղաշարժերի գործոնային փոխառնչությունների հիման վրա առաջարկվել է անհրաժեշտ վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդել՝ ստոխաստիկ փոխկախվածությամբ ներկայացնելով ՀՆԱ-ի փոփոխությունների վրա գյուղատնտեսության և առևտրի ոլորտում զբաղվածության կարգավորման ներազդեցությունը, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ-ում զբաղվածության մակարդակի և մակրոտնտեսական ցուցանիշների կապի սերտության փոխառնչությունները, որոնք թույլ են տալիս կանխատեսելու զբաղվածության մակարդակի փոփոխությունները կախված դրամական տրանսֆերտներից, միջին աշխատավարձից, ներմուծման և արտահանման իրական ծավալներից:
- Մշակվել է զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մեթոդաբանություն, որը հնարավորություն է ընձեռնում զբաղվածության կարգավորման առանձին ոլորտների և գործիքների կիրառման ներազդեցության շնորհիվ ներկայացնելու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության թուլացման ուղղությունները:
- Շահառուների սպասումների հիման վրա առաջարկվել է զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման հայեցակարգ, որը հնարավորություն է ընձեռնում համադրելի դարձնելու պետություն-մասնավոր ոլորտ փոխահամագործակցված կարգավորիչ գործառույթների արդյունքները և դրանով իսկ վերհանելու զբաղվածության կարգավորման ուժեղ և թույլ կողմերը:

Ընդհանուր առմամբ, ատենախոսին հաջողվել է ատենախոսության նպատակին համահունչ հետազոտություն կատարել և ստանալ ցանկալի վերջնարդյունքներ, այնուհանդերձ, ատենախոսությունում նկատվել են որոշ թերություններ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսությունում լայն քննարկումներ առիթ է հանդիսացել զբաղվածության կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրումն ու ներդրման հնարավորությունները ՀՀ-ում (ավելի քան 20 էջ), սակայն արդյունքում ատենախոսը հստակ չի ներկայացրել, թե ի վերջո, աշխատուժի զբաղվածության կարգավորման միջազգային փորձի որ մոդելն է առավել նպատակահարմար օգտագործել Հայաստանի Հանրապետությունում:
2. Ատենախոսության հիմնական տեքստը ծանրաբեռնված է տեղեկատվական որոշ աղյուսակներով, որոնք վերլուծական առումով ուղղակիորեն չեն առնչվում հետազոտության գիտական նորույթի ձևավորմանը (աղյուսակներ 1.2.2, 2.1.1, 3.1.1): Ատենախոսությունը կշահեր, եթե նման տեղեկատվությունը բեռնաթափվեր հիմնական տեքստից և տեղափոխվեր հավելվածներ:
3. Ատենախոսության մեջ ներկայացված որոշ վիճակագրական տվյալներ ավարտվում են 2020 թվականով (գծապատկերներ 2.3.4 2.3.6 2.3.8, 2.3.9, 2.3.11) և չեն նորացվել ՀՀ ԱՎԾ վերջին հրապարակումներով: Կարծում ենք, որ ատենախոսի կողմից կատարված վերլուծական հաշվարկները առավել համոզիչ կլինեին, եթե դրանք հիմնվեին վիճակագրական ծառայության վերջին հրատարակումների վրա:
4. Ատենախոսությունը կշահեր, եթե զբաղվածության պետական կարգավորման տեսական վերլուծությունները, որոնք ներկայցվել են հետազոտության երրորդ գլխում զետեղված գծապատկերներ 3.2.1-3.2.4-ում, հիմնավորվեին նաև վիճակագրական գնահատականներով և թվային հաշվարկներով: Այս դեպքում, աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռման պետական կարգավորչ գործառույթների բարելավման գծով ատենախոսի առաջարկները կլինեին առավել համոզիչ:
5. Ատենախոսը պետք է ներկայացներ, թե ինչպես են որոշվում զբաղվածության կարգավորման արդյունավետության ինտեգրալային ցուցանիշի հաշվարկի տեղեկատվական տվյալները (աղյուսակ 3.3.2): Առաջարկվող ինտեգրալային ցուցանիշի տեղեկատվական ապահովվածություն առավել խորքային

մեկնաբանությունների պիտի արժանային, որը շրջանցվել է ատենախոսի կողմից:

6. Ատենախոսությունում նկատվում են նաև որոշ թարգմանչական և շարահյուսական սխալներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվող ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է և վերոնշյալ թերությունները բնավ չեն նսեմացնում նրա արժանիքները: Ատենախոսության սեղմագիրը և հոդվածները բխում են հետազոտության բովանդակությունից:

Արինե Տարոնի Ստեփանյանի «Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ և արդիանությամբ համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, ըստ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորիմանը Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍ **Ս.Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Պարոն Ս.Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտ. քարտուղար **ՆԱՐԵԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ**

01. 12. 2022թ.